Հավելված
Հաստատվել է ՀՀ ՎՊ Խորհրդի
2015թ. մայիսի 20-ի թիվ 14/1 որոշմամբ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության կառավարության տարեկան հաշվետվության մասին

Ի կատարումն ՀՀ Սահմանադրության 77-րդ հոդվածի, «ՀՀ վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի, 2-րդ մասի, բ) կետի, 6-րդ հոդվածի, 3-րդ մասի, «ՀՀ Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի, 1-ին մասի պահանջների:

2014 թվականի ՀՀ պետական բյուջեի ամփոփ ցուցանիշները

Համաձայն ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ ՀՀ կառավարության հաշվետվության (այսուհետ՝ Հաշվետվություն), ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի եկամուտները «ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսվել են 1,135,902,832.0 հազ. դրամ: 2014 թվականի ընթացքում պետական բյուջեի եկամուտները ՀՀ կառավարության որոշումներով ավելացել են 52,859,800.0 հազ. դրամով, և արդյունքում՝ ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի եկամուտների ճշտված ծրագիրը կազմել է 1,188,762,632.0 հազ. դրամ:

Համաձայն ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի մասին ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 12-րդ կետի, արտաբյուջետային միջոցների որոշ հաշիվների մուտքերի և ելքերի նախահաշվային և փաստացի ցուցանիշները ներառվել են ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի կատարման հաշվետվությունում և արտացոլվել են որպես պետական բյուջեի համապատասխան մուտքեր և ելքեր: 2014 թվականի պետական հիմնարկների արտաբյուջետային միջոցների հաշիվներին մուտքերը ճշտված ծրագրով նախատեսվել է 39,312,852.1 հազ. դրամ մուտք, որից՝ 36,513,411.1 հազ. դրամը դիտարկվող

ժամանակահատվածում ստացված եկամուտներն են, 1,423,874.5 հազ. դրամը՝ արտաբյուջետային հաշիվների ելքերի ֆինանսավորմանն ուղղվող հաշվի տարեսկզբի միջոցները, իսկ ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերը նախատեսվել է 1,375,566.5 հազ. դրամ: Հաշվետվությամբ արտաբյուջետային միջոցների հաշիվներին փաստացի մուտքը կազմել է 38,686,258.7 հազ. դրամ, որից՝ 36,771,994.1 հազ. դրամը դիտարկվող ժամանակահատվածում փաստացի ստացված եկամուտներն են, 538,697.9 հազ. դրամը՝ արտաբյուջետային հաշիվների ելքերի ֆինանսավորմանն ուղղվող հաշվի տարեսկզբի միջոցները, իսկ 1,375,566.6 հազ. դրամը՝ ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերը:

2014 թվականի պետական բյուջեի փաստացի եկամուտները ՀՆԱ-ի նկատմամբ կազմել են 25.3% (2013 թվականին՝ 25.1%):

Օրենքով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի ընդամենը ծախսերը նախատեսվել է 1,246,437,412.0 հազ. դրամ, 2014 թվականի ընթացքում ՀՀ կառավարության որոշումներով, ավելացել է 48,055,748.1 հազ. դրամով, և դրա արդյունքում ծախսերի ճշտված ծրագիրը (ներառյալ՝ 37,302,175.2 հազ. դրամ արտաբյուջետային միջոցների հաշվին նախատեսված ծախսը) կազմել է 1,294,493,160.1 հազ. դրամ, իսկ ծախսերի ճշտված ծրագիրը (առանց արտաբյուջետային միջոցների հաշվին նախատեսված ծախսի) կազմել է 1,257,190,984.9 հազ. դրամ: Ընդամենը փաստացի ծախսերը (ներառյալ՝ 33,776,140.0 հազ. դրամ փաստացի արտաբյուջետային ծախսերը) կազմել են 1,235,053,437.5 հազ. դրամ կամ Օրենքով նախատեսվածի 99.1%-ը, ճշտված ծրագրի՝ 95.4%-ը: 2014 թվականի պետական բյուջեի փաստացի ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ կազմել են 27.3% (2013 թվականին՝ 26.75%):

Օրենքով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի պակասուրդը հաստատվել է 110,534,580.0 հազ. դրամ: ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախատեսված պակասուրդը տարվա ընթացքում պակասել է 4,804,051.9 հազ. դրամով, այսինքն՝ ճշտված ծրագիրը կազմել է 105,730,528.1 հազ. դրամ: ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի կատարման արդյունքում գրանցվել է 90,290,702.6 հազ. դրամի պակասուրդ, որը Օրենքով նախատեսվածի 81.7%-ն է, իսկ տարեկան ճշտված ծրագրով նախատեսվածի՝ 85.4%-ը: ՀՆԱ-ի նկատմամբ 2014 թվականի պակասուրդը կազմել է 2.0% (2013 թվականին՝ 1.7%):

2002-2014 թվականների ՀՀ պետական բյուջեների մասին ՀՀ օրենքներում կատարված վերլուծությամբ առկա է ՀՀ կառավարությանը փոխանցված լիազորությունների ընդլայնում, որով 2014 թվականին ՀՀ կառավարությունը լիազորվել է լրացուցիչ եկամուտների և ներգրավված միջոցների առկայության դեպքում իրականացնել լրացուցիչ ծախսերի բաշխում:

2014 թվականի պետական բյուջեի եկամուտների վերաբերյալ

2014 թվականի պետական բյուջեով ծրագրված եկամուտները կազմել են 1,135,902,832.0 հազ. դրամ, իսկ ճշտված ծրագիրը՝ 1,188,762,632.0 հազ. դրամ, որը ավելի է նախորդ տարվա ցուցանիշից համապատասխանաբար 103,072,071.2 և 114,950,630.0 հազ. դրամով (ներառյալ արտաբյուջետային եկամուտները):

2014 թվականի պետական բյուջեի փաստացի եկամուտները կազմել են 1,144,762,734.9 հազ. դրամ, որը ավել է 2013 թվականի փաստացի եկամուտներից 73,392,130.6 հազ. դրամով կամ 6.9%-ով (ներառյալ արտաբյուջետային եկամուտները): 2014 թվականի պետական բյուջեի փաստացի եկամուտների հարաբերակցությունը (ներառյալ՝ արտաբյուջետային միջոցները) ՀՆԱ-ի նկատմամբ կազմել է 25.3%, 2013 թվականի 25.1%-ի փոխարեն:

ՀՀ կառավարության հաշվետվությամբ ներկայացված տվյալների համաձայն 2014 թվականի պետական բյուջեի փաստացի եկամուտների կառուցվածքում, ներառյալ արտաբյուջետային եկամուտները, հարկային եկամուտները և պետական տուրքը կազմել են 93.0%, պաշտոնական դրամաշնորհները՝ 1.5% այլ եկամուտները 5.5%, իսկ առանց արտաբյուջետային եկամուտների համապատասխանաբար՝ 95.9% հարկային եկամուտ և պետական տուրք, 1.3 % պաշտոնական դրամաշնորհ և այլ եկամուտները՝ 2.8%:

ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի փաստացի հարկային եկամուտները (ներառյալ արտաբյուջետային եկամուտները) տարեկան ճշտված ծրագրով նախատեսված 1,060,896,207.4 հազ. դրամից պակաս է հավաքագրվել 36,059,629.6 հազ. դրամով, կամ 3.4%-ով, որի արդյունքում փաստացի հարկային եկամուտները կազմել են 1,024,836,577.8 հազ. դրամ՝ապահովելով տարեկան ճշտված ծրագրի 96.6%

կատարում: 2014 թվականի պետական բյուջեի փաստացի հարկային եկամուտները ՀՆԱ-ի նկատմամբ կազմել են 22.6%, նախորդ տարվա 22.8%-ի համեմատ:

ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի փաստացի պետական տուրքերից մուտքերը կազմել են 39,281,810.6 հազ. դրամ, ճշտված ծրագրի 39,174,591.4 հազ. դրամի դիմաց՝ ապահովելով տարեկան ճշտված ծրագրի 100.3% կատարում:

2014 թվականի պետական բյուջեի պաշտոնական դրամաշնորհները Օրենքով նախատեսվել են 19,991,746.3 հազ. դրամ, ճշտված ծրագրով՝ 25,115,959.7 հազ. դրամ, իսկ փաստացի ցուցանիշը իրականացվել են 17,250,432.6 հազ. դրամով, որը կազմել է Օրենքով նախատեսվածի և ճշտված ծրագրի համապատասխանաբար 86.3% և 68.7%: Առանց արտաբյուջետային եկամուտների, փաստացի պաշտոնական դրամաշնորհները կազմել են 14,518,881.6 հազ. դրամ, որը ճշտված ծրագրի նկատմամբ կազմում է 63.6 %:

2014 թվականի պետական բյուջեի այլ եկամուտները Օրենքով նախատեսվել են 18,141,291.2 հազ. դրամ, ճշտված ծրագրով՝ 63,575,873.5 հազ. դրամ, իսկ փաստացի ցուցանիշը կազմել է 63,393,913.9 հազ. դրամ, որը կազմել է Օրենքով նախատեսվածի և ճշտված ծրագրի համապատասխանաբար 349.4% և 99.7%: Առանց արտաբյուջետային այլ եկամուտների, փաստացի այլ եկամուտները կազմել են 30,605,936.1 հազ. դրամ, որը ճշտված ծրագրի նկատմամբ կազմում է 100%:

2014 թվականին բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվել են շուրջ 8.4 մլրդ դրամ տոկոսավճարներ (2013 թվականին՝ 7.1 մլրդ դրամ):

Արդեն քանի տարի շարունակ Վերահսկիչ պալատի եզրակացություններում արձանագրվում է այն փաստը, որ ՀՀ պետական բյուջեի մասին ՀՀ օրենքում և հետևաբար հաշվետվություններում բացակայում են հարկային եկամուտները՝ ըստ եկամտատեսակների ճշտված ծրագրերի և դրանց համապատասխան կատարողականների, որը հնարավորություն չի տալիս կատարել եկամուտների առավել հիմնաոր վերլուծություն, որը սակայն անուշադրության է մատնվում ՀՀ Ազգային ժողովի և ՀՀ կառավարության կողմից:

2014 թվականի պետական բյուջեի ծախսերի վերաբերյալ

Ըստ Հաշվետվության, ընդամենը փաստացի ծախսերը (ներառյալ՝ 33,776,140.0 հազ. դրամ փաստացի արտաբյուջետային ծախսերը) կազմել են 1,235,053,437.5 հազ. դրամ, որը կազմում է ճշտված ծրագրի՝ 95.4%-ը:

ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի ծրագրերի ***(գործառնական դասակարգմամբ)*** թվաքանակը 660-ն է: Ծրագրերի կատարման ուսումնասիրությամբ պարզվել է՝

1. թվով քսան ծրագրեր, որոնց ընդհանուր գումարը ճշտված ծրագրերով նախատեսվել է 24,772,083.0 հազ. դրամ, չեն կատարվել, այսինքն՝ վճարումներ չեն իրականացվել,
2. թվով ութ ծրագրեր, որոնց ընդհանուր գումարը Օրենքով նախատեսվել է 822,420.0 հազ. դրամ ճշտված ծրագրով զրոյացվել են,
3. թվով տասնվեց ծախսային ծրագրերով փաստացի ծախսերը կազմել են 42,716,643.0 հազ. դրամ. ճշտված ծրագրից ավելի ծախս է կատարվել՝ 17,003,827.7 հազ. դրամի չափով, ինչը պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերով:
4. թվով քառասունվեց ծախսային ծրագրերով (այդ թվում՝ 20-ը արտաքին վարկային և դրամաշնորհային ծրագրեր են) փաստացի կատարողականը ճշտված ծրագրի նկատմամբ կատարվել է 50%-ից ցածր (ներառված չեն չկատարված ծրագրերը): Այդ ծրագրերի ճշտված ծրագրային ցուցանիշը կազմել է 25,323,757.0 հազ. դրամ, մինչդեռ, փաստացի կատարողականը կազմել է 6,502,851.9 հազ. դրամ, կամ ճշտված ծրագրի 25.68%-ը: Պետք է նշել, որ այդ ծրագրերում փաստացի ցուցանիշի ամենամեծ բացասական շեղումը ճշտված ծրագրի նկատմամբ գումարային արտահայտությամբ արձանագրվել է «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման» ծրագրում՝ 4,498,975.09 հազ. դրամ,
5. թվով հիսունչորս ծախսային ծրագրեր Օրենքով նախատեսված չեն եղել, սակայն, ճշտված ծրագրով նախատեսվել են 42,144,025.10 հազ. դրամ, իսկ փաստացի կատարվել են 37,410,050.34 հազ. դրամ, կամ ճշտված ծրագրի 88.77%-ով: Այդ

հիսուներեք ծրագրերից քսանութը դրամաշնորհային ծրագրեր են, որոնց փաստացի ծախսը կազմել է 4,645,656.8 հազ. դրամ,

6. 2014 թվականի ընթացքում կատարված ծախսերի կառուցվածքը հետևյալն է՝ սոցիալական պաշտպանություն՝ 27.7%, ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ՝ 17.6%, պաշտպանություն՝ 15.4%, կրթություն՝ 9.4%, հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն՝ 8.5%, տնտեսական հարաբերություններ՝ 6.7%, առողջապահություն՝ 6.2%, հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր՝ 3.8%, բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ՝ 2.5%, հանգիստ, մշակույթ և կրոն՝ 1.7%, շրջակա միջավայրի պահպանություն՝ 0.4%:

ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի փաստացի ծախսերի (գործառնական դասակարգմամբ) ճշտված ծրագրի նկատմամբ կատարողականը տասնմեկ բաժիններից իննում նախատեսվածից ցածր է, ընդ որում, ամենացածր կատարողականը արձանագրվել է «Տնտեսական հարաբերություններ» բաժնում՝ 75.1%:

Ըստ Հաշվետվության, ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի փաստացի ծախսերի (ներառյալ՝ արտաբյուջետային հաշիվների միջոցների տնօրինման արդյունքում կատարված ծախսերը) կառուցվածքը ***(տնտեսագիտական դասակարգմամբ)*** հետևյալն է. 89.2%-ն ուղղվել է ընթացիկ ծախսերին, իսկ 10.8%-ը՝ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններին:

2013 թվականի համեմատ, 2014 թվականին ՀՀ պետական բյուջեի ծախսերն աճել են 8.1%-ով: 2014 թվականին ծախսերը Օրենքով նախատեսվել են 1,246,437,412.0 հազ. դրամ: 2014 թվականին փաստացի ծախսերը կազմել են 1,235,053,437.5 հազ. դրամ կամ Օրենքով հաստատված ցուցանիշի նկատմամբ կատարվել են 99.1%-ով, իսկ ճշտված ծրագրի նկատմամբ՝ 95.4%-ով:

2014 թվականին պետական բյուջեի ծախսերի 28.2%-ը կամ 347,679,999.3 հազ. դրամը տրամադրվել է սոցիալական նպաստներին և կենսաթոշակներին, 19.2%-ը կամ 237,402,217.5 հազ. դրամը՝ ծառայությունների և ապրանքների ձեռքբերմանը, 13.6%-ը կամ 168,174,380.6 հազ. դրամը՝ այլ ծախսերին, 11.3%-ը կամ 139,403,052.2 հազ. դրամը՝ դրամաշնորհներին, 5.0%-ը տոկոսավճարներին, իսկ 2.3%-ը՝ սուբսիդիաներին:

Հաշվետու տարում պետական բյուջեից տրամադրվել են 139,403,052.2 հազ. դրամի դրամաշնորհներ, որից՝ 129,288,952.5 հազ. դրամը պետական հատվածի այլ

մակարդակներին հատկացված ընթացիկ դրամաշնորհներն են (ընդամենը դրամաշնորհների 92.7%-ը), 8,087,013.3 հազ. դրամը (ընդամենը դրամաշնորհների 5.8%-ը) կապիտալ դրամաշնորհներն են, հատկացված պետական հատվածի այլ մակարդակներին, 1,986,560.3 հազ. դրամը (ընդամենը՝ դրամաշնորհների 1.4%-ը) հատկացվել են միջազգային կազմակերպություններին:

Ընթացիկ դրամաշնորհներից 38,957,722.3 հազ. դրամն ուղղվել է համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաներին, 27,546,305.1 հազ. դրամը՝ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին, իսկ այլ ընթացիկ դրամաշնորհները կազմել են 43,722,621.6 հազ. դրամ:

2014 թվականին ՀՀ պետական բյուջեի ծախսերի 347,679,999.3 հազ. դրամը կազմել են սոցիալական նպաստները և կենսաթոշակները, որից 65.3%-ը միայն կենսաթոշակներն են:

«Այլ ծախսեր» հոդվածով հատկացվել է 168,174,380.6 հազ. դրամ, որից 94.2%-ը կամ 158,493,041.2 հազ. դրամը՝ այլ ծախսերի «այլ ծախսերն» են:

2014 թվականին ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները Օրենքով նախատեսվել են 152,710,955.1 հազ. դրամի չափով, բյուջետային տարվա ընթացքում ավելացվել են 10,268,112.9 հազ. դրամով և ճշտված ծրագրով գումարը կազմել է 162,979,068.0 հազ. դրամ: Փաստացի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները կազմել են 133,746,961.0 հազ. դրամ: Բյուջետային տարվա ընթացքում Օրենքով նախատեսված ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը և դրանց օտարումից մուտքերը ավելացվել են համապատասխանաբար՝ 13,356,320.2 հազ. դրամով և 3,088,207.3 հազ. դրամով, և ճշտված ծրագիրը համապատասխանաբար կազմել է 166,084,551.3 հազ. դրամ և 3,105,483.3 հազ. դրամ, իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով փաստացի ծախսերը և դրանց օտարումից մուտքերը համապատասխանաբար կազմել են 136,680,368.7 հազ. դրամ և 2,933,407.7 հազ. դրամ:

ՀՀ 2014 թվականին պետական բյուջեի ծախսերի **(գերատեսչական դասակարգմամբ)** վերլուծությունից պարզվել է, որ ընդամենը փաստացի ծախսերից 60.9%-ը բաժին է ընկնում հինգ գերատեսչություններին: Այսպես՝

1. ՀՀ 2014 թվականին պետական բյուջեի փաստացի ընդամենը ծախսերի 21.5%-ը բաժին է ընկնում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությանը: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությանը Օրենքով նախատեսվել է հատկացնել 268,138,213.0 հազ. դրամ, ճշտված ծրագրով՝ 267,736,491.2 հազ. դրամ և փաստացի ծախսը կատարվել է 265,415,076.9 հազ. դրամի չափով, կամ ճշտված ցուցանիշի 99.1%-ով: 2014 թվականին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությանը հատկացված միջոցների փաստացի ծախսերը 2013 թվականի համեմատ աճել են 18.7%-ով, որը հիմնականում կենսաթոշակների ավելացման արդյունքն է:

2. 2014 թվականին փաստացի ընդամենը ծախսերի մեջ երկրորդ ամենամեծ տեսակարար կշիռը բաժին է ընկնում ՀՀ պաշտպանության նախարարությանը՝ 15.3% կամ 188,839,700.4 հազ. դրամ, որն Օրենքով նախատեսվել է 193,177,806.2 հազ. դրամ, իսկ ճշտված ծրագրի նկատմամբ կատարվել է 98.0%-ով:

3. 2014 թվականին ՀՀ ֆինանսների նախարարության (104021) ծախսը պետական բյուջեի ամբողջ փաստացի ծախսերի 13.4%-ն է, որն Օրենքով նախատեսվել է 162,284,124.2 հազ. դրամ, ճշտված ծրագրով՝ 170,788,147.5 հազ. դրամ: ՀՀ ֆինանսների նախարարության փաստացի ծախսերը կազմում են 165,346,579.5 հազ. դրամ կամ ճշտված ծրագրի 96.8%-ը:

4. 2014 թվականին ՀՀ պետական բյուջեի փաստացի ծախսերի 6.0%-ը բաժին է ընկել ՀՀ առողջապահության նախարարությանը: Այդ գերատեսչությանը հատկացված միջոցների օգտագործման համար Օրենքով նախատեսվել է հատկացնել 77,884,191.9 հազ. դրամ, ճշտված ծրագրով՝ 82,265,643.7 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսերը կատարվել են 74,463,845.1 հազ. դրամի չափով, կամ ճշտված ցուցանիշի 90.5%-ը: 2014 թվականին ՀՀ առողջապահության նախարարության փաստացի ծախսերը 2013 թվականի համեմատ աճել են 16.2%-ով: Աճը հիմնականում պայմանավորված է 2 նոր ծրագրերի՝ «Զինծառայողներին, ինչպես նաև փրկարար ծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին բժշկական օգնության ծառայություններ», «Պետական հիմնարկների եվ կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում ծրագրում ընդգրկված առողջապահական փաթեթի շրջանակներում բժշկական օգնության եվ

սպասարկման ծառայությունների տրամադրում», ինչպես նաև «Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի ավելացմամբ:

5. 2014 թվականին փաստացի ընդամենը ծախսերի 4.7%-ը բաժին է ընկել ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանությանը: Օրենքով նախատեսվել է հատկացնել 34,225,427.9 հազ. դրամ, ճշտված ծրագրով 59,260,414.3 հազ. դրամ և փաստացի ծախսը կատարվել է 58,600,660.0 հազ. դրամի չափով, կամ ճշտված ցուցանիշի՝ 98.9%-ը: 2014 թվականին ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանությանը հատկացված միջոցների փաստացի ծախսերը 2013 թվականի համեմատ աճել է 15.0%-ով, որը պայմանավորված է «Հասարակական կարգի պահպանության ապահովում» ծրագրի աճով 6,136,056.3 հազ. դրամով:

2014 թվականին գերատեսչություններից ճշտված ծրագրի նկատմամբ ամենացածր կատարողականն արձանագրվել է ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության ծախսերի կատարողականում՝ 16.3%, ինչը պայմանավորված է «Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիրի վերականգնման ծրագրի»՝ Օրենքով և ճշտված ծրագրով նախատեսված 5,288,165.3 հազ. դրամի չափով չկատարմամբ:

Ըստ Հաշվետվության, 2014 թվականին ՀՀ կառավարության ընդունած որոշումների համաձայն պետական հիմնարկների համար բացված արտաբյուջետային հաշիվների միջոցների շրջանառության փաստացի ծախսերը կազմել են 33,776,140.0 հազ. դրամ կամ ճշտված ծրագրի 90.5%-ը:

2014 թվականին արտաբյուջետային հաշիվների միջոցների շրջանառության փաստացի ամենամեծ ծախս կատարել են երեք գերատեսչություններ՝

1. ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանություն՝ ամբողջ արտաբյուջետային ծախսերի 63.7%-ը,
2. ՀՀ ֆինանսների նախարարությանը (105013)*՝ ամբողջ արտաբյուջետային ծախսերի 15.9%-ը,
3. ՀՀ առողջապահության նախարարություն՝ ամբողջ արտաբյուջետային ծախսերի 11.0%-ը:

2014 թվականին ՀՀ կառավարության պահուտային ֆոնդից Օրենքով նախատեսվել է հատկացնել 20,166,921.1հազ. դրամ: Տարվա ընթացքում այդ ցուցանիշը ավելացել է 27,336,022.18 հազ. դրամով, և ճշտված ծրագիրը կազմել է 47,502,943.3 հազ. դրամ: 2014 թվականին ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից փաստացի հատկացվել է 47,004,134.1 հազ. դրամ: 2014 թվականին ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի միջոցներից 44.4%-ը ուղղվել է դրամաշնորհներին, ընդ որում, դրամաշնորհների մեջ ամենամեծ տեսակարար կշիռը կազմել են «Ընթացիկ դրամաշնորհներ պետական հատվածի այլ մակարդակներին» հոդվածով պահուստային ֆոնդի հաշվին կատարված ծախսերը:

2014 թվականի բյուջետային տարում կնքված պայմանագրերով պետական կարիքների համար նախատեսվել է իրականացնել 431,583,679.6 հազ. դրամի գնումներ (առանց արտաքին վարկերի և դրամաշնորհների ծրագրերի և գաղտնի գնումների), սակայն փաստացի վճարվել է 424,939,460.8 հազ. դրամ:

Հաշվետվությունում բացակայում է Օրենքի N 6 հավելվածի Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ ԿԲ) 2014 թվականի վարչական ծախսերի կատարման մասին տեղեկատվությունը, ինչը Վերահսկիչ պալատին հնարավորություն չի տալիս գնահատել հաշվետվությունը՝ հաշվետու բյուջետային տարվա պետական բյուջեի մասին Օրենքի 12-րդ հոդվածի պահանջների կատարման մասով:

2014 թվականի պետական բյուջեի պակասուրդի վերաբերյալ

2014 թվականի պետական բյուջեի պակասուրդի փաստացի ֆինանսավորումը կազմել է 90,290,702.6 հազ. դրամ: 2013 թվականի համեմատ, 2014 թվականին պակասուրդի մեծությունը աճել է 26.2 տոկոսային կետով: 2013 թվականի համեմատ, 2014 թվականին պակասուրդի ֆինանսավորման արտաքին աղբյուրները նվազել են՝ 75.3%-ով, իսկ ներքին աղբյուրները աճել են՝ 739.9%-ով:

2014 թվականին պետական բյուջեի պակասուրդը Օրենքով նախատեսվել է ֆինանսավորել 110,534,580.0 հազ. դրամով: Տարվա ընթացքում պակասուրդի ֆինանսավորման մեծությունը նվազել է 4,804,051.9 հազ. դրամով, և ճշտված ծրագիրը

կազմել է 105,730,528.1 հազ. դրամ: Կատարողականը Օրենքով հաստատված ցուցանիշի նկատմամբ կազմել է 81.7%, իսկ ճշտված ծրագրի նկատմամբ՝ 85.4%:

2014 թվականին պակասուրդի ֆինանսավորման ներքին աղբյուրները Օրենքով նախատեսվել են 87,367,478.1 հազ. դրամ, տարվա ընթացքում կատարվել են փոփոխություններ, և ներքին աղբյուրներից ֆինանսավորման գումարը նվազեցվել է 23,523,385.0 հազ. դրամով, որի արդյունքում պակասուրդի ֆինանսավորման ներքին աղբյուրների ճշտված ծրագիրը կազմել է 63,844,093.1 հազ. դրամ: Փաստացի այդ ցուցանիշը կազմել է 69,954,103.0 հազ. դրամ կամ Օրենքով հաստատված ցուցանիշի նկատմամբ 80.1%, իսկ ճշտված ծրագրի նկատմամբ՝ 109.6%:

Ըստ «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ կետի «ՀՀ կենտրոնական բանկի հաշվեկշռում ֆինանսական տարվա արդյունքում առաջացած վնասը պահուստների հանրագումարը գերազանցելու դեպքում հաշվեկշռի հրապարակման պահից երեսուն օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ գերազանցող գումարի չափով, Օրենքով սահմանված կարգով, որպես ներդրում Կենտրոնական բանկի կապիտալում, Կենտրոնական բանկին է տրամադրում անտոկոս ցպահանջ պետական հասարակ մուրհակներ: Այդ մուրհակների մարումը կատարվում է Կենտրոնական բանկի պահանջի դեպքում՝ պետական բյուջեի հաշվին»:

Համաձայն Հաշվետվության, 2014 թվականի ընթացքում պետական բյուջետային միջոցների ազատ մնացորդի փոփոխությունը կազմել է -28,340.6 մլն դրամ, այդ թվում՝

41,388.9 մլն դրամ՝ գանձապետական միասնական հաշվի մնացորդի փոփոխություն, որից՝

-49,540.2 մլն դրամ՝ Կետրոնական գանձապետարանում դեպոզիտի փոփոխություն,

-264.3 մլն դրամ՝ տեղական բյուջեի փոփոխություն,

2,809.1 մլն դրամ՝ արտաբյուջեի փոփոխություն,

5,970.5 մլն դրամ՝ ԾԻԳ-ի միջոցների փոփոխություն,

82,413.8 մլն դրամ՝ պետական բյուջեի միջոցների փոփոխություն,

-110,400.0 մլն դրամ՝ ժամկետային ավանդներ ԿԲ-ում,

-27,986.2 մլն դրամ՝ պետական ընդհանուր ռեսուրսների (ներառյալ՝ ժամկետային ավանդներ ԿԲ-ում) փոփոխություն, այդ թվում՝ 1,370.1 մլն դրամ՝ միջանկյալ հաշվի փոփոխություն,

-1,763.8 մլն դրամ՝ հաշվետու ժամանակաշրջանում տարեսկզբի ազատ մնացորդին մուտք,

473.9 մլն դրամ՝ ՀՀ պետական հիմնարկների արտաբյուջետային հաշիվների տարեսկզբի մնացորդից օգտագործում,

2,305.7 մլն դրամ՝ ֆինանսավորման և դրամարկղային ծախսերի տարբերություն:

2015 թվականի տարեսկզբի պետական ընդհանուր ռեսուրսները կազմել են 51,429.3 մլն դրամ:

2014 թվականին Օրենքով նախատեսվել է Միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների կողմից ստանալ 105,424,437.4 հազ. դրամ արտաքին վարկ, սակայն տարվա ընթացքում այդ ցուցանիշը փոփոխվել է, և տարեկան ճշտված ծրագիրը կազմել է 122,678,845.6 հազ. դրամ: 2014 թվականին արտաքին վարկերի և փոխատվությունների ստացումը փաստացի կազմել է 106,745,367.2 հազ. դրամ, կամ ճշտված ծրագրի 87.0%-ը:

2014 թվականին Օրենքով արտաքին վարկերի մասով նախատեսվել է մարել 38,070,124.4 հազ. դրամ, ճշտված ծրագրով՝ 38,070,124.4 հազ. դրամ և փաստացի մարվել է 37,979,370.8 հազ. դրամ: Կատարողականը ճշտված ծրագրի նկատմամբ կազմել է 99.8%:

ՀՀ վերահսկիչ պալատի կողմից բազմիցս արձանագրվել է, որ միջազգային համաձայնագրերի շրջանակներում Հայաստանի Հանրապետությանը տրամադրված բոլոր բյուջետային միջոցների շրջանառումը գանձապետական միասնական հաշվով չէր կատարվում: 2014 թվականին արդեն բոլոր ԾԻԳ-երի հաշիվները գտնվում են գանձապետական միասնական հաշվում և 2014 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ԾԻԳ-երի հաշիվների մնացորդը կազել է 16,020.9 մլն դրամ:

Մեր կարծիքով, ՀՀ բյուջետային միջոցների կառավարման արդյունավետության նպատակով անհրաժեշտ է, որ՝

1. Գանձապետարանը ԾԻԳ-երի հաշիվների նկատմամբ իրականացնի նախնական հսկողություն՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
2. «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետությանը և համայնքներին ամրագրված բոլոր բյուջետային միջոցները հաշվեգրվեն, շրջանառվեն գանձապետական

միասնական հաշվով: Մասնավորապես՝ ՊՈԱԿ-ներին, ԲԸ-ին, Հիմնադրամներին, ինչպես նաև «Գերմանահայկական հինադրամ» ծրագրի կառավարման գրասենյակ՝ հիմնարկին տրամադրված բոլոր բյուջետային միջոցները շրջանառվեն գանձապետական միասնական հաշվով: Պետք է նշել, որ ՀՀ կառավարության նախաձեռնությամբ 2013 թվականի ապրիլի 30-ին կատարվել է փոփոխություն «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ կետում և արդեն, ըստ օրենքի, Գանձապետական միասնական հաշիվը ներառում է նաև պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների բանկային սպասարկման համար ենթահաշիվները: Սակայն, չնայած այն հանգամանքին, որ արդեն երկու տարի է ինչ կատարվել է այդ փոփոխությունը, մինչ օրս ՊՈԱԿ-ների հաշիվները գտնվում են առևտրային բանկերում:

2014 թվականի ՀՀ պետական պարտքը

2014 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 4,441.5 մլն ԱՄՆ դոլար (2,109.6 մլրդ դրամ), որից՝ ՀՀ արտաքին պետական պարտքը կազմել է 3,785.2 մլն ԱՄՆ դոլար (1,797.9 մլրդ դրամ), իսկ ՀՀ ներքին պետական պարտքը կազմել է 656.3 մլն ԱՄՆ դոլար (311.7 մլրդ դրամ): 2014 թվականի ՀՀ պետական պարտքում ՀՀ արտաքին պարտքը կազմել է 85.2%, ՀՀ ներքին պարտքը՝ 14.8%: Այսինքն՝ 2013 թվականի համեմատ, 2014 թվականին ՀՀ պետական պարտքի կառուցվածքում ՀՀ արտաքին պետական պարտքը աճել է 0.2 տոկոսային կետով:

Պետական պարտքի մասին"ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն"Պետական պարտքը տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ չպետք է գերազանցի Հայաստանի Հանրապետության նախորդ տարվա համախառն ներքին արդյունքի (այսուհետ՝ ՀՆԱ՝ 60%-ը): 2014 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 2013 թվականի ՀՆԱ-ի 49.3%-ը, այսինքն՝ պահպանվել է օրենքի այդ կետի պահանջը: Նախորդ տարվա համեմատ այս ցուցանիշը աճել է 2.8 տոկոսային կետով:

2014 թվականի ՀՀ ներքին պետական պարտքը

2014 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ներքին պետական պարտքը կազմել է 311.7 մլրդ դրամ (656.3 մլն ԱՄՆ դոլար)՝ նախատեսված 297.2 մլրդ դրամի (733.3 մլն ԱՄՆ դոլար) փոխարեն: 2013 թվականին ներքին պետական պարտքը նախորդ տարվա համեմատ աճել է 32.1 մլրդ դրամով կամ 11.5 %-ով:

30.12.2014 թվականի դրությամբ ներքին պետական պարտքի կառուցվածքը հետևյալն է՝

1. 289.4 մլրդ դրամը կամ 92.9%-ը պետական գանձապետական պարտատոմսեր,
2. 1.9 մլրդ դրամը կամ 0.6 %-ը ՀՀ ռեզիդենտներից վարկեր և փոխառություններ
3. 19.4 մլրդ դրամը կամ 6.2 %-ը ռեզիդենտների կողմից ձեռքբերված արտարժութային պետական պարտատոմսեր,
4. 1.0 մլրդ դրամը կամ 0.3%-ը ներքին երաշխիքներ:

2014 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ներքին պետական պարտքը բնութագրող ցուցանիշներն ունեն հետևյալ տեսքը.

1. 2014 թվականին փաստացի տեղաբաշխվել է 80.5 մլրդ դրամի պարտատոմսեր և մարվել 63.0 մլրդ դրամի պարտատոմսեր:

2014 թվականի վերջին շրջանառության մեջ եղած պետական գանձապետական պարտատոմսերի ծավալը կազմել է 289.9 մլրդ դրամ, որից.

- կարճաժամկետ պարտատոմսերի ծավալը կազմել է 12.5 մլրդ դրամ կամ 4.3%-ը, 2013 թվականին նույն ժամանակահատվածում 22.9 մլրդ դրամ կամ 8.3%:
- միջնաժամկետ պարտատոմսերի ծավալը կազմել է 150.8 մլրդ դրամ կամ 52.0%-ը, 2013 թվականի նույն ժամանակահատվածում 147.4 մլրդ դրամ կամ 53.8%
- երկարաժամկետ պարտատոմսերի ծավալը կազմել է 125.5 մլրդ դրամ կամ 43.3%-ը, 2013 թվականի նույն ժամանակահատվածում 102.8 մլրդ դրամ կամ 37.5%

- խնայողական արժեկտրոնային պարտատոմսերի ծավալը կազմել է 1.1 մլրդ դրամ կամ 0.4%-ը, 2013 թվականի նույն ժամանակահատվածում 1.1 մլրդ դրամ կամ 0.4%:

2. 2014 թվականին պետական պարտատոմսերի միջին կշռված ժամկետայնությունը կազմել է 2003 օր (ՊԿՊ-143 օր , ՄԺՊ-649 օր, ԵԺՊ-3830 օր, ԽԱՊ - 452 օր),
3. Միջին կշռված եկամտաբերությունը 13.5% է, որը 2013 թվականին կազմել է 14.0%,
4. Մարման բեռի բաշխվածությունը 2032 թվականն է,
5. 2014 թվականի պետական գանձապետական պարտատոմսերի գծով դեֆիցիտի փաստացի ֆինանսավորումը կազմել է 16.7 մլրդ դրամ՝ նախատեսված 18.0 մլրդ դրամի փոխարեն (ճշտված պլանը -16.7 մլրդ դրամ):

2014 թվականին «Ստացված վարկերի և փոխատվությունների մարում» մասով 1.6 մլրդ դրամի չափով "ՎՏԲ -Հայաստան Բանկ" ՓԲԸ- ից ստացված վարկի փաստացի մարում է եղել՝ որի կատարողականը նախատեսվածի նկատմամբ կազմել է 100%:

2014 թվականին ներքին պետական պարտքի սպասարկման փաստացի ծախսը կազմել է 33.1 մլրդ դրամ կամ նախատեսված ցուցանիշի 99.5 %-ը, որից 32.9 մլրդ դրամը (99.4%) միայն պետական պարտատոմսերի գծով սպասարկման ծախսն է: Հաշվետու տարվա ընթացքում աճ է նկատվել ներքին պարտքի սպասարկման ծախսերում, որը պայմանավորված է ներքին պարտքի ծավալի աճով: Նախորդ տարվա համեմատ ներքին պարտքի սպասարկման ծախսը աճել է 3.2 մլրդ դրամով կամ 10.7%-ով:

2014 թվականի ՀՀ արտաքին պետական պարտքը

2014 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ արտաքին պետական պարտքը կազմել է 3,785.2 մլն ԱՄՆ դոլար, որից՝ 3,345.3 մլն ԱՄՆ դոլարը ՀՀ կառավարության արտաքին պարտավորությունն է, իսկ 440.0 մլն ԱՄՆ դոլարը ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ԿԲ)՝ պարտավորությունը: 2014 թվականին ՀՀ արտաքին պարտքը 2013 թվականի համեմատ նվազել է 113.9 մլն ԱՄՆ դոլարով կամ 2.9%-ով: Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության կանխատեսման (նոր արտաքին վարկեր չներգրավելու

դեպքում) ՀՀ արտաքին պարտքը գագաթնակետին կհասնի 2019 թվականին՝ 4,665.6 մլն ԱՄՆ դոլար, որից հետո կնվազի:

1. 2014 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությանը տրամադրված արտաքին վարկերի գծով ստացումները

2014 թվականին ՀՀ արտաքին պետական պարտքի գծով ստացումները (մասհանումներ) կազմել են 318.5 մլն ԱՄՆ դոլար, որից ՀՀ կառավարությունը ստացել 256.8 մլն ԱՄՆ դոլար, իսկ ԿԲ-ը՝ 61.7 մլն ԱՄՆ դոլար: ՀՀ կառավարության ստացումները 2014 թվականին նախորդ տարվա համեմատ նվազել են 71.9%-ով, որը պայմանավորված է նրանով, որ չի իրականացվել արտարժութային պետական պարտատոմսերի տեղաբաշխումը:

2014 թվականին ՀՀ կառավարության ստանձնած 256.8 մլն ԱՄՆ դոլար (106,745.4 մլն ՀՀ դրամ) արտաքին պարտավորությունները (մասհանում) ամբողջությամբ արտաքին վարկերի գծով ստացումներն են (արտարժույթով պետական պարտատոմսերից ստացումներ չեն եղել): Արտաքին վարկերի գծով կատարված փաստացի մասհանումները կազմում են ծրագրվածի 87%-ը:

Արտաքին վարկերի գծով կատարված մասհանումներից.

- 92.7%-ը կամ 238.2 մլն ԱՄՆ դոլարը միջազգային կազմակերպությունների գծով մասհանումներն են, որում գերակշռում են թվով 3 կազմակերպություններից՝ Վերակառուցման և Զարգացման Միջազգային բանկ 100.6 մլն ԱՄՆ դոլար (42.2%), Ասիական Զարգացման Բանկ 89.9 մլն ԱՄՆ դոլար (37.7%), Եվրոպական ներդրումային բանկ 27.7 մլն ԱՄՆ դոլար (11.6%) ստացումները:
- 6.6%-ը կամ 16.9 մլն ԱՄՆ դոլարը օտարերկրյա պետությունների գծով կատարված մասհանումներն են, որից միայն 11.3 մլն ԱՄՆ դոլարը կամ 67.0%-ը գերմանական KFW-ի գծով մասհանումներն են:
- 0.7%-ը կամ 1.7 մլն ԱՄՆ դոլարը առևտրային բանկերի գծով կատարված մասհանումներն են, որից միայն 918 հազ ԱՄՆ դոլարը կամ 54.4%-ը բելգիական KBC բանկի գծով մասհանումներն են:

2014 թվականի ընթացքում ՀՀ ԿԲ-ին տրամադրված արտաքին վարկերի գծով ստացումները կազմել են 61.7 մլն ԱՄՆ դոլար, որից ամենամեծ տեսակարար կշիռն են կազմում՝

- 35.2 մլն ԱՄՆ դոլարը կամ 57.0%-ը տրամադրել է Արժույթի Միջազգային Հիմնադրամը (Extended Fund Facility–EFF վարկային ծրագրով),
- 18.5 մլն ԱՄՆ դոլար կամ 29.9%-ը Գերմանիան (KFW) (Գյուղատնտեսության աջակցության ծրագիր՝ 11.4 մլն ԱՄՆ դոլար, Վերականգնվող Էներգիայի զարգացման III ծրագիր՝ 7.1 մլն ԱՄՆ դոլար):

2014 թվականի տարեվերջին ՀՀ արտաքին պետական վարկերի 63.2%-ը արտոնյալ վարկերն են: 2014 թվականի տարեվերջին ոչ արտոնյալ վարկերի տեսակարար կշիռը ՀՀ արտաքին պետական վարկերի մեջ կազմել է 36.8%: Վերլուծության արդյունքում պարզվել է, որ 2014 թվականի ընթացքում ՀՀ արտաքին պետական վարկերի մեջ առկա է արտոնյալ վարկերի տեսակարար կշռի նվազում: 2013 թվականին 2012 թվականի համեմատ արտոնյալ վարկերը աճել են 8.9 տոկոսային կետով, իսկ 2014 թվականին 2013 թվականի համեմատ արտոնյալ վարկերը նվազել են 1.2 տոկոսային կետով:

2014 թվականին ՀՀ կառավարությունը արտաքին վարկերի գծով ստացել է 256.8 մլն դոլար, որից՝ ոչ նպատակային վարկերի գծով ստացել է 94.0 մլն դոլար կամ ընդհանուրի 36.6%-ը կամ 12.0 մլն ԱՄՆ դոլարով ավելի քան 2013 թվականի ոչ նպատակային վարկերը, իսկ նպատակային վարկերի գծով՝ 162.8 մլն դոլար կամ ընդհանուրի 63.4%-ը: Ստացված ոչ նպատակային վարկերի 94.0 մլն ԱՄՆ դոլարը մուտքագրվել է ընդհանուր պետական ռեսուրսներ և բյուջետային տարվա ընթացքում ուղղվել է բյուջետային ծախսեր կատարելուն, դեֆիցիտի ֆինանսավորմանը:

2. 2014 թվականի ՀՀ արտաքին պետական պարտքի սպասարկումը

2014 թվականին Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքի սպասարկման ծախսը կազմել է 266.0 մլն ԱՄՆ դոլար (191.0 մլն ԱՄՆ դոլար մարում և 75.0 մլն ԱՄՆ դոլար տոկոսավճարներ), որից՝ ՀՀ կառավարության սպասարկման ծախսը կազմել է 162.7 մլն ԱՄՆ դոլար (70.5 մլն ԱՄՆ դոլարը տոկոսավճարներ և 92.2

մլն ԱՄՆ դոլարը՝ մարում), իսկ ԿԲ-ինը՝ 103.3 մլն ԱՄՆ դոլար (4.5 մլն ԱՄն դոլարը տոկոսավճարներ և 98.8 մլն ԱՄՆ դոլարը՝ մարում): ՀՀ կառավարության ներգրաված արտաքին վարկերի սպասարկումը 5.6 մլն ԱՄՆ դոլարով կամ 4.5%-ով նվազել է օրենքով սահմանված ցուցանիշի համեմատությամբ:

2014 թվականին ՀՀ կառավարության ներգրաված արտաքին վարկերի գծով փաստացի վճարված տոկոսավճարները 3.9 մլն ԱՄՆ դոլարով կամ 11.9%-ով պակաս է օրենքով նախատեսված ցուցանիշից: 2014 թվականին վճարված 70.5 մլն ԱՄՆ դոլար տոկոսավճարներում 42.0 մլն ԱՄՆ դոլարը կամ 59.6%-ը արտարժութային պետական պարտատոմսերի գծով տոկոսավճարներն են, իսկ 28.5 մլն ԱՄՆ դոլարը կամ 40.4%-ը ՀՀ կառավարության ներգրաված արտաքին վարկերի գծով տոկոսավճարներն են՝ միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների և առևտրային բանկերի գծով: ՀՀ կառավարության ներգրաված արտաքին վարկերի գծով տոկոսավճարներում գերակշիռ մասը միջազգային կազմակերպությունների գծով տոկոսավճարներն են՝ 22.5 մլն ԱՄՆ դոլար կամ 79.0%: Միջազգային կազմակերպությունների գծով տոկոսավճարներում գերակշռում են Զարգացման միջազգային ընկերակցության կողմից տրամադրված վարկերի գծով տոկոսավճարները՝ 11.0 մլն ԱՄՆ դոլար (48.7%): ՀՀ կառավարության ներգրաված արտաքին վարկերի տոկոսավճարներում 5.71 մլն ԱՄՆ դոլարը կամ 20.0%-ը օտարերկրյա պետությունների գծով տոկոսավճարներն են, որում 2.7 մլն ԱՄՆ դոլարը կամ 47.7%-ը միայն Ճապոնիային վճարված տոկոսավճարներն են: ՀՀ կառավարության ներգրաված արտաքին վարկերի տոկոսավճարներում մնացած 276.6 հազ ԱՄՆ դոլարը կամ 1%-ը առևտրային բանկերի գծով տոկոսավճարներն են, որում 120.9 հազ ԱՄՆ դոլարը կամ 43.7%-ը ավստրիական Էրստե բանկին վճարված տոկոսավճարներն են:

2014 թվականին ՀՀ կառավարության արտաքին պարտքի գծով փաստացի մարումները 1.76 մլն ԱՄՆ դոլարով կամ 1.9%-ով պակաս է օրենքով նախատեսված ցուցանիշից: 2014 թվականին ՀՀ կառավարության ներգրաված արտաքին վարկերի գծով փաստացի մարումները կազմել են 92.2 ԱՄՆ դոլար, որից 83.9 մլն ԱՄՆ դոլարը կամ 91.0%-ը միջազգային կազմակերպությունների գծով մարումներն են, որից 58.8 մլն ԱՄՆ դոլարը կամ 70.0 %-ը միայն Արժույթի միջազգային հիմնադրամի Stand-by Arrangement վարկի մարմանն ուղղված գումարներն են:

2014 թվականին ՀՀ կառավարության ներգրաված արտաքին վարկերի գծով մարումների ընդհանուր գումարից 8.3 մլն ԱՄՆ դոլարը կամ 9.0%-ը օտարերկրյա պետությունների գծով մարումներն են, որից 3.1 մլն ԱՄՆ դոլարը կամ 37.4%-ը Գերմանիային վճարված մարումներն են:

Վերլուծության արդյունքում պարզվել է, որ 2015 թվականներին ՀՀ արտաքին պարտքը մարելու և տոկոսավճարները իրականացնելու համար անհրաժեշտ կլինի 390.1 մլն ԱՄՆ դոլար, կամ 1.5 անգամ ավելին, քան 2014 թվականին: 2017 թվականից սկսած ՀՀ արտաքին պետական պարտքի սպասարկման ծախսը աստիճանաբար կավելանա և «պիկին» կհասնի 2020 թվականին՝ կազմելով 918.6 մլն ԱՄՆ դոլար: ՀՀ կառավարության արտաքին պետական պարտքի սպասարկումը «պիկին» կհասնի 2020 թվականին՝ 850.2 մլն ԱՄՆ դոլար:

3. ՀՀ արտաքին պետական պարտքի բեռը բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշները

2014 թվականի ՀՀ արտաքին պարտքի բեռը բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշների վերլուծությունից պարզվել է, որ Արտաքին պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը 34.8% է, այսինքն՝ այս ցուցանիշով չի գերազանցել 50%-ի սահմանը: Բոլոր հինգ ցուցանիշներով Հայաստանի Հանրապետությունը բնութագրվում է որպես նվազ պարտքի բեռ ունեցող երկիր: (Աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքի բեռը բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշները

Ցուցանիշի անվանումը	Ցուցանիշների սահմանները՝ ըստ դասակարգման խմբերի	Փաստացի ցուցանիշներ	
		2013	2014
ԶՆԱ/ՀՆԱ	Առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրներ >80%		
	Միջին պարտքի բեռ ունեցող երկրներ 48%-80%		
	Նվազ պարտքի բեռ ունեցող երկրներ < 48%	35.80%	27.40%

ՁՆԱ/ Արտահանում	Առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրներ >220%		
	Միջին պարտքի բեռ ունեցող երկրներ 132%-220%	136.80%	
	Նվազ պարտքի բեռ ունեցող երկրներ <132%		90.50%
Արտաքին պարտքի սպասարկում /Արտահանում	Առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրներ >30%	31.51%	
	Միջին պարտքի բեռ ունեցող երկրներ 18%-30%		
	Նվազ պարտքի բեռ ունեցող երկրներ <18%		8.10%
Տոկոսավճար /Արտահանում	Առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրներ > 20%		
	Միջին պարտքի բեռ ունեցող երկրներ 12%-20%		
	Նվազ պարտքի բեռ ունեցող երկրնե <12%	1.80%	2.30%
Արտաքին պետական պարտք/Ար-տահանում	Առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրներ >275%		
	Միջին պարտքի բեռ ունեցող երկրներ 165%-275%		
	Նվազ պարտքի բեռ ունեցող երկրներ <165%	142.60%	114.90%
Արտաքին պարտք/ՀՆԱ	Սահման՝ 50.00%	37.40%	34.80%
ՀՀ արտաքին պետական պարտքի սպասարկում /Պետբյուջեի եկամուտներ	Սահման՝ 22.5%	32.90%	9.70%

Ելնելով վերոնշյալից, Վերահսկիչ պալատը գտնում է.

ՀՀ կառավարության կողմից ՀՀ Ազգային ժողով ներկայացված՝ «Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ» տարեկան հաշվետվությունում եկամուտներին, ծախսերին և պակասուրդին ամրագրված ցուցանիշներն արտացոլում են պետական բյուջեի փաստացի կատարողականը: